

սին ի ժամանակի անդ ի ձեռն նորա տասն հազար հեծեալ ընդիր ընդիր եւ քաջ այրեւծի, կազմ զինու եւ բազում պատրաստութեամբ, եւ հանդերձ նոքաբ խաղայր, ի կիրթ ձգեալ հասաներ զաւրացն Պարսից: 10 Իսկ իբրեւ զգացին զաւրավարքն զաւրաց թագաւորին Պարսից՝ եթէ զաւրածողով է ի վերայ նոցա զաւրավարն Յայոց Վասակ, զմնացորդս աշխարհին գերփեցին գերեցին առին եւ փախեան յաշխարհն իւրեանց ճեպով տազնապաւ: 11 Ապա զհետ կրթեր Վասակ Մամիկոնեան, եւ երթայր հասաներ նոցա. չուէին ի սահմանս Ատրպատականին: 12 Իսկ զաւրքն թագաւորին Պարսից թողին զգերին, եւ փախստական լինէին հանդերձ Մերուժանան: 13 Եւ թափեր անչափ եւ անթիւ զամենայն զառեալ գերութիւնն, եւ դառնային խաղաղութեամբ առ թագաւորն Արշակ:

#### ԳԼՈՒԽ ԻԴ.

1 Յաղագս Մերուժանայ, թէ զհա՛րոյ ապստամբեր եւ գրգռէր զթագաւորն Պարսից Շապուհ, եւ առնէր պատերազմ. եւ թէ զհա՛րոյ լինէր առաջնորդ թագաւորին Պարսից Շապուհ, եւ ածեր հէն յաշխարհն Յայաստանի. եւ կամ զհա՛րոյ գերեր զոսկերս Արշակունեաց. կամ զհարոյ զաւրավարն Վասակ թափեաց զգերեալսն եւ յաղթեաց թշնամոյն:

2 Ապա յետ այսորիկ Մերուժան վատանշան գրգռէր զթագաւորն Պարսից զՇապուհն ի վերայ թագաւորին Արշակայ մեծաւ բարկութեամբ: 3 Ապա զաւրածողով լինէր թագաւորն Պարսից Շապուհ, եւ լրտեսս արծակեր՝ դիտել զարքայն Յայոց զԱրշակ: 4 Եւ մինչ նա դեռ զգուշացեալ Արշակ արքայն Յայոց հանդերձ իւրովք զաւրաւրն զատրպատական սահմանաւրն, զի անդ սպասեր զաւրացն Պարսից, նոցա առաջնորդ կալեալ զՄերուժանն՝ ընդ այլ կարթել ասպատակ յաշխարհն Յայոց առնէին: 5 Չի ընդ Աղծնիս եւ ընդ Ծոփս մեծ, ընդ Անգեղ տունն եւ ընդ գաւառն Անձտայ ընդ Ծոփս Շահունոց, ընդ Սզուր գաւառն եւ ընդ Դարանաղէ, ընդ Եկեղեաց, զկողմանս այնց գաւառացն Շապուհ թագաւորն Պարսից հանդերձ անթիւ զաւրաւրն ասպատակել հեղեալ ծաւալէր բազմութեամբ իբրեւ զջուրս բազումս:

6 Այրացաւեր առնէին, եւ զանթիւ մարդիկ արկանէին ի սուր սուսերի իւրեանց. զկանայս եւ զմանկտի հանէին ընդ ցից սայլից, զկեսս զոր ի ներքոյ կամացն արկեալ կասուին: 7 Եւ զարանց բազմութիւնս տային ի կոխումն փղաց. եւ զառանց թուոյ զմատաղ մանկտոյն զայն ի գերութիւն վարէին. եւ զբազում ամուրս քանդէին, եւ զբերդս ակերէին զամուրս: 8 Եւ առին ակերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ի գաւառին Աղծնեաց յիշխանութեան բղէշիս. քառասուն հազար երդ, զայն նոյնհետայն ի գերութիւն խաղացուցին. եւ ինքեանք ի Ծոփս մեծ արշաւեցին: 9 Եւ անդ էին բերդք՝ զոր ա-